<<ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՊՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N Վ3-ՄԱՁՏԾՁԲ-2019/1»

ք. Վանաձոր 28.03.2019թ.

<<Վանաձորի թիվ 3 պոլիկնինիկա>> ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն՝ Արտակ Եդոյանի-, որը գործում <<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>>ՊՓԲԸ- ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, ԱՁ Հովսեփ Ջիմբաշյանի դեմս կազմակերպության տնօրեն՝ որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ձևաթղթերի տպագրման ծառայություն (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

:3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 704750(յոթ հարյուր չորս հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն :

: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով արձանագրության ստորագրման պահից 30 բանկային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշվածհաշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Եթե մեկ տարվա ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,ապա պայմանագիրն դառնում է առոչինչ

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում

պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ապրանքի մատակարարման ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ	Ա/Ձ Հովսեփ Ջիմբաշյան
ք.Վանաձոր, Պ. Սևակի 49	Հասցե Ք. Վանաձոր, Գ. Անդրանիկի 101/1-5
<<ԱԿԲԱ>> Կրեդիտ Ագրիկոլ բանկ	Բանկ «Evoka Bank» ՓԲԸ
ՀՎՀՀ 06907229	<<166000374826 0100
Հ/Հ 220055140267000	ՀՎՀՀ 66897486
տնօրեն՝ _____ Ա. Եղոյան	տնօրեն՝ _____ Հ. Ջիմբաշյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
28.03.2019թ. -ին *կնքված*
ՎՅ-ՄԱՏԱՁԲ-19/1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի										
գնումներիպլանովնախատեսվածնցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքայինշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկականբնութագիրը	չափմանմիավորը	միավորգինը /ՀՀ դրամ	ընդհանուրգինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
39515410	ձևաթղթերի տպագրման ծառայություն	Հ. Հ	Ձևաթղթերի դեղատոմսերի,բլանկների, հանձնման ընդունման ապրանքագրերի,վճարման ապրանքագրերի, ուղեգրերի տպագրման ծառայություն	հատ	704750	704750	1	Վանաձոր Պ, Սևակի 49	6	Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N/N	*Ձևաթղթերի անվանումը Չափաբաժին 1 /Բլանկներ/*	*չ/միվ.*	*Տեխնիկական բնութագիր*				*Քանակ*	*Գին*	*Գումար*
1.	Դեռահասի /18 տ./փոխադրման եզրակացության տիպային ձև A4 1 երես ՕՖ 60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	300	4,5	1350
2.	Առողջության անձնագիր /ամբուլատոր պոլիկլինիկական հաստատության կողմից տրվող /A4, 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	300	4,5	1350
3.	Առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման հաշվառման ձև 0002/1 A4 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	50000	3,5	175000
4.	Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրությանը վավերացնող գրանցման ձև A4 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	1500	3,9	5850
5.	18 և բարձր տարիքի անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր A4 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	ուղղահայաց	Ա4	150	4,4	660

6.	Մուտքի ապրանքագիր A4 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	1000	3,9	3900
7.	Պահանջագիր ձև N2 A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ..	ուղղահայաց	Ա5	500	2	1000
8.	Տեղեկագիր աշխատաժամանակի հաշվարկի A3 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 3	70	10	700
9.	Մեմորիալ օրդեր /տիպային ձև N 274/ A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	ուղղահայաց	Ա 5	200	2	400
10.	Երեխայի /աղջիկ տղա/ բժշկական հսկողության ամբուլատոր քարտ ,Կազմ Խրոմ 300 գ միջուկ ՕՖ60գ	հատ	Երկկողմանի Աղյուսակները գունավոր	Կազմ Խրոմ 300 գ միջուկ ՕՖ60գ 60գ.	վերնագրված, կարված հորիզոնական	1/2A3 14 թերթ	350	175	61250
11.	Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ Կազմ Խրոմ 300 գ ,Միջուկ, ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	Կազմ Խրոմ 300 գ միջուկ ՕՖ60գ 60գ..	վերնագրված, կարված հորիզոնական	1/2A3 10թերթ	800	110	88000
12.	Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթ A5 1 երես ՕՖ60գ	հատ	միակողմանի	60գ.	ուղղահայաց	Ա5	250	2	500
13.	Կանխարգելիչ պատվաստումների ձև Ձև N063 1/2 A3 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	միակողմանի	1/2 A3 2թերթ	300	30	9000
14.	Քաղվածք/մեծահասակ ամբուլատոր բժշկական քարտից/ A5 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	ուղղահայաց	Ա 5	1000	2	2000
15.	Քաղվածք / մանկական ամբուլատոր բժշկական քարտից / A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	ուղղահայաց	Ա 5	1000	2	2000
16.	Մեզի անալիզի ձևաթուղթ A6 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Երկկողմանի	Ա6	4500	1	4500
17.	Արյան բիոքիմիական անալիզի ձևաթուղթ A6 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	ուղղահայաց	Ա6	10000	1	10000
18.	Ուղեգիր/մասնագիտական խորհրդատվության կամ լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների/ A51 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	ուղղահայաց	Ա 5	1500	1,5	2250
19.	Արյան անալիզի ձևաթուղթ A6 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	6000	1	6000
20.	Միզասեռական օրգանների արտադրության քննության A61 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	200	1	200
21.	Ամբուլատոր քարտի միջուկ /մեծահասակի/ 1/2A3 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	1/2A3	1000	4	4000

22.	Մանկական ամբուլատոր քարտի միջուկ 1/2A3 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	1/2A3	1000	4	4000
23.	Կեղտի անալիզի ձևաթուղթ A6 1 երես ՕՖ60գ	հատ	միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	1500	1	1500
24.	Դեղատոմս /սովորական/ Դեղատոմսային ձևաթուղթ N3 A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	40000	1,5	60000
25.	Պարբերական զննման գրանցման թերթիկ A4 2երես	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 4	200	4,4	880
26.	Դրամարկղի մուտքի օրդեր A5 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա5	1000	2	2000
27.	Դրամարկղի ելքի օրդեր A5 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	500	2	1000
28.	Դեղատոմս անվճար ինքնապատճեով և համարակալված A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի Ինքնապատճեյով	60գ.	Ուղղահայաց	Ա5	10000	8	80000
29.	Հաշիվ ապրանքագիր A4 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	400	4,4	1760
30.	Հաշվետվության ձև /դեղատան կամ ավագ բուժ քրոջ նյութական արժեքների/ A4 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 4	250	4,4	1100
31.	Հաշվետվության ձև / կաբինետների նյութական արժեքների շարժի/ A4 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 4	200	4,4	880
32.	Արյան անալիզի ձևաթուղթ / հեմոգլոբին/ A6 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ	Հորիզոնական	Ա6	2000	1	2000
33.	Տիպային մատյաններ ,100թերթանոց	հատ	Երկկողմանի	60գ.	վերնագրված, կարված	Ա4 100թերթ	60	800	48000
34.	Տիպային գրքեր հաշվապահության, 100 թերթանոց	հատ	Երկկողմանի	60գ.	վերնագրված, կարված	Ա4 100 թերթ	30	900	27000
35.	Տիպային գրքեր կոշտ կազմով 200 թերթ	հատ	Երկկողմանի	Կազմ՝ խրոմ300գ 60գ.	վերնագրված, կարված	Ա 4 200թերթ	15	1400	21000
36.	Աշխատողի անհատական քարտ A4 2 երես Խրոմ 300գ.	հատ	Երկկողմանի	Խրոմ 300գ	Ուղղահայաց	Ա4	100	38	3800

37.	Դեղորայքի ռեստր A4 1 երես ՕՖ60գ	հատ	Միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա4	50	5	250
38.	Վիճակագրական կտրոն A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	1500	2	3000
39.	Քարտ հակակատաղության օգնության դիմողի A3 2 երես ՕՖ 60գ	հատ	Երկկողմանի	60գ.	միակողմանի	Ա3	80	9	720
40.	Լիազորագիր Համարակալած A6 2 երես ՕՖ 60գ	հատ	երկկողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	100	1	100
41.	Գործուղման վկայական A5 2 երես ՕՖ 60	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	60	2	120
42.	Աշխատավարձի հաշվարկման ցուցակ A3 2 երես ՕՖ 60	հատ	Երկկողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 3	150	9	1350
43.	Քարտ առաջնային հետազոտման համար A4 1 երես ՕՖ 60	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	100	5	500
44.	Տուբերկուլյոզով հիվանդի ն այցելության թերթիկ A4 1 երես ՕՖ60	հատ	միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա4	100	5	500
45.	Տուբերկուլյոզի լաբորատորիայի ուղեգրի ձև TB05 A5 2 երես ՕՖ 60	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	100	2	200
46.	Տուբերկուլյոզով հիվանի անհատական հսկողության քարտ 1/2A310 5հատ ՕՖ 60	հատ	Ուղղահայաց	60գ.	վերնագրված, կարված	1/2A310 5հատ	100	30	3000
47.	Հաշվարկային թերթիկ 13,3սմx10 սմ 1 երես ՕՖ 60	հատ	միակողմանի	60գ.	հորիզոնական.	13,3սմ x10 սմ	500	1	500
48.	Հիմնական միջոցների դուրս գրման ակտ A4 2 երես ՕՖ 60	հատ	երկկողմանի	60գ.	հորիզոնական.	Ա 4	20	5	100
49.	Երեխայի բժշկական քարտ դպրոցական և նախադպրոցական հաստատությունների համար A4 2 երես 8 թերթ ՕՖ 60	հատ	Երկկողմանի գույնավոր	60գ.	Ուղղահայաց	1/2A3 8թերթ	400	40	16000
50.	Կազմարարական աշխատանքներ Կազմել A4 2 թերթ խրոմ 300գ	հատ	Երկկողմանի	60գ.	Վերնագրված	Ա4	60	300	18000
51.	Ռենտգեն պատասխանի թերթիկ A5 1 երես ՕՖ 60	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	500	2	1000

52.	Գերձայնային հետազոտության պատասխան A5 1 երես Օֆ 60	հատ	Միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	500	2	1000
53.	Շտապ հաղորդման թերթիկ A5 2երես Օֆ	հատ	Երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	800	2	1600
54.	Դիսպանսեր հիվանդի հսկողության քարտ խրոմ 200գ	հատ	Երկկողմանի	խրոմ 200գ	Հորիզոնական	Ա 3	500	20	10000
55.	Ձև 39 բժշկի օրագիր A5 2 երես ՕՖ 60	հատ	միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 5	600	2	1200
56.	Սերոլոգիական հետազոտությունների ձևաթուղթ A61 երես	հատ	միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	500	1	500
57.	Բուժ վիճակագիր A6 1երես	հատ	միակողմանի	60գ.	Հորիզոնական	Ա 6	800	1	800
58.	Ուլտրաձայնային հետազոտության պատասխան A-4 2 երես ՕՖ60գ կին	հատ	երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 4	600	3,9	2340
59.	Ուլտրաձայնային հետազոտության պատասխան A-4 2 երես ՕՖ60գտղամարդ	հատ	երկկողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 4	300	4,4	1320
60.	տեղեկանք սոց փաթեթիN1A-4 1 երես ՕՖ60գ	հատ	միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 4	500	3,9	1950
61.	քարտ նախազ. հետազոտության և բժ. փորձաքննության	հատ	միակողմանի	60գ.	Ուղղահայաց	Ա 4	400	3,9	1560
62.	քարտ զորակ. հետազոտության և բժ. Փորձաքննության A-4 1 երես ՕՖ60գ	հատ	միակողմանի	60	Հորիզոնական	Ա4	400	3,9	1560
63.	Դեղատոմս հեգեմետ դեղերի համար համարակալված A5 2 երես ՕՖ60գ	հատ	Երկկողմանի համարակալված	60գ.	Ուղղահայաց	Ա 5	300	2,5	750

ԳՆՈՐԴ

Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՓԲԸ
ք.Վանաձոր, Պ. Սևակի 49
<<ԱԿԲԱ>> Կրեդիտ Ագրիկոլ բանկ
ՀՎՀՀ 06907229
Հ/Հ 220055140267000
տնօրեն՝ (ստորագրություն) Ա. Երոյան
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

Ա/Ձ Հովսեփ Ջիմբաշյան
Հասցե՝ ք.Վանաձոր Գ.Նժդեհի 101/1-5
Բանկ՝ «Evoka Bank» ՓԲԸ
Հ/Հ 166000374826 0100
ՀՎՀՀ 66897486
տնօրեն՝ (ստորագրություն) Հ. Ջիմբաշյան
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2019թ. բյուջետային միջոցների հաշվին Ապրիլից-------դեկտեմբեր
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I-XII ամիս
1	2	3	4	5
1	Ձևաթղթերի տպագրման ծառայություն	հատ	704750	704750

ԳՆՈՐԴ

Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ
ք.Վանաձո, Պ. Սևակի 49
<<ԱԿԲԱ>> Կրեդիտ Ագրիկոլ բանկ
ՀՎՀՀ 06907229
Հ/Հ 220055140267000

տնօրեն՝ Ա. Եղոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

Ա/Ձ Հովսեփ Ջիմբաշյան
Հասցե Ք. Վանաձոր Գ. Նժդեհի 101/1-5
Բանկ «Evoka Bank» ՓԲԸ
<<166000374826 0100
ՀՎՀՀ 66897486

տնօրեն՝ Հ. Ջիմբաշյան
(ստորագրություն)
Կ.Տ